

## ՏԵՂԵԿԱԼՔ

### 2015 թվականի ընթացքում ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՊՀ և ՏԱ տեսչության կողմից ՌԻՍԿի վրա հիմնված ստուգումների արդյունքների վերաբերյալ

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ստուգաթերթերով իրականացվել են ստուգումներ 206 օբյեկտներում: Դրանց արդյունքում, հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար 153 անձանց նկատմամբ կայացվել են վարչական տուգանքի ենթարկելու վերաբերյալ որոշումներ՝ 8 970 000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգումների ընթացքում հայտնաբերված հրդեհային անվտանգության նորմերի և կանոնների առավել բնութագրական խախտումները հետևյալն են՝

-Օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով.

-Տարհանման ուղիների պատերը և առաստաղները երեսապատված չեն չայրվող շինանյութով.

-Տարհանման ելքերի դռները չեն բացվում դեպի դուրս.

-Էլեկտրական տնտեսությունը մոնտաժվել և շահագործվում է էլեկտրակայանքների սարքվածքի կանոնների (ԷՍԿ) տարատեսակ խախտումներով.

-Ջեռուցման համար չեն օգտագործվում գործարանային արտադրության սարքեր.

-Հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով.

-Սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգեր.

-Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են անսարք վիճակում.

-Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին.

-Առկա չէ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացություն:

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն